ՀՀ Արմավիրի մարզի Հայկավանի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1);

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ 2-րդ կարգի մասնագետը իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները

Քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- միջնակարգ կրթություն
- «Համայնքի ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն;
- Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության
- Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա

2012-ի փետրվարի 22-ին ժամը 12-00 ին Հայկավանի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ, ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի. վկայականի աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
- Արական սեռի անձիք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող փաստաթղթերի պատճենները՝ իսկականի հետ միասին:
- Մեկ լուսանկար 3Х4 չափի:
- Անաձնագրի պատճենը:
- Հայտարարություններ (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝

ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00 –ից մինչև 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումի ընդունման վերջին ժամկետն է 2012 թ-ի փետրվարի 8-ը ժամը 18 00

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություն ստանալու,

ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ Հայկավանի գյուղապետարան հեռ 237-716-54 և Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և Հ.Գ.Մ հարցերով վարչություն
հասցե ք. Արմավիր, Աբովյան 71 հեռ 237-2-07-70: